Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1489 – 1494

49.99
5-74

2010

002

1. [illegible], [illegible]՝ Աշխարհաբարեան հայ լեզու
2. [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]
3. [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]
4. [illegible] [illegible]՝ [illegible]
5. [illegible], [illegible]՝ [illegible]
6. [illegible], [illegible]՝ [illegible]
Հայաստանեայց Առ. Եկեղ. աշխարհաբարը

Հրատարակութիւն «Վարժարան» մանկավարժական ամսագրի

891.71-1
Դ-90

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

(Պ--չէէ՞ է։)

1002
5635

Թարգմանեց

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէսի Վարդանեան։
1884

Перепечатано изъ педагогическаго журнала „Варжаранъ" № № 7, 8, 9 и 10 1884 г.

109361-ԱՀ

Тип. М. Вартаняна. Тр. переул. д. № 11.

ՆՈՒԵՐ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻՆ

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

Ա

Կապուտակ ծովի ափին շատ մօտիկ
Երեսուն տարի ծեր մարդ ու կնիկ
Մէկ հին կիսաւեր գետնափոր խրճում
Հանդարտ ու լռիկ սուսկ էին ապրում։
Ծերուկը ծովից միշտ ձուկ էր բռնում,
Պառաւն էլ տանը նստած՝ թել մանում։
Մէկ օր ցանց ձգեց ծովը ծերունին,
Ու ջրից հանեց տիղմ բաւականին.
Նա երկրորդ անգամ ցանցը ձգեց ծով,
Ցանցը լցուեցաւ ջրաբոյս խոտով.
Նա երրորդ անգամ ցանցը ծով ձգեց—

Ու յանկարծ ոսկի մէկ ձըկնիկ բըռնեց։
Ըսկըսաւ ոսկի ձըկնիկը կանչել,
Մարդկային լեզուով այսպէս աղաչել՝
«Ծերուկ՝ թո՛ղ ինձի որ ծովը երթամ,
«Ի՛նչ ուզէ սիրտըդ՝ բոլորը կուտամ».
Զարմացաւ ծերը ու սարսափեցաւ,
Երբ որ այս խօսքը ականջին հասաւ
Ուղիղ երեսուն տարի ձըկնորս էր,
Դեռ նա չէր լսած, որ ձուկը խօսէր·
Ցանցիցը հանեց, նորից ձգեց ծով,
Նա ոսկի ձըկին այսպէս ասելով·
«Տէ՛ր ընդ քեզ, անմեղ իմ ոսկի ձըկնիկ,
«Գընա՛ ծովի խորքը, լողա՛ հանդարտիկ,
«Այնտեղ մինչ վերջը դու ապրէ՛ անդորր
«Քու պարգեւները ինձ չեն հարկաւոր»։

Բ

Ասաց ու դարձաւ իր պառաւ կընկան
Ու պատմեց նորան հրաշքըն այն օրուան
«Այսօր ես ցանցըս ծովը ձգեցի,

«Ծովիցը ոսկի ձըկնիկ հանեցի,
«Ոսկի եմ ասում, հասկացի՛ր, պառաւ,
«Մեզ պես ձըկնիկը խօսկ ըսկըսաւ,
«Խոստացաւ նա ինձ շատ գանձ, շատ բաներ,
«Խոստացաւ ինձ տալ ինչ սիրտըս ուզէր.
«Բայց ես նորանից բան չի պահանջեցի,
«Առանց փրկանքի ծովն արձակեցի»:
Պառաւը ծերի վըրայ բարկացաւ,
Ու ջիշոցք տալով, այսպէս խօսեցաւ.
«Ծերո՛ւկ դու անմիտ, ծերո՛ւկ դու յիմար,
«Ինչո՞ւ վարձ չառիր փրկանքի համար,
«Գոնէ լըւացքի մէկ տաշտ խընդրէիր,
«Մերը կոտրած է,— այդ խօ գիտէիր»:
Կապոյտ ծովի ափ ծերուկը գընաց,
Ծովի երեսը կամացուկ ծըփաց,
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկնին.
Եկաւ ձըկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերուկ պատուական»:
Ծերունին այսպէս տըւեց պատասխան.
«Պառաւիս սիրտը շատ բորբոքած է,

«Իբր թէ լուացքի տաշտը կոտրած է,
«Նորը տարում է, բեր ինձի համար,
«Ու խեղճ ծերուկիս չի տալիս դադար»:
«Մի՛ տրտմիր, ասաց նորան ձկնիկը,
«Նոր տաշտ կ՚ունենայ այսօր քու կնիկը»:

Գ

Ծերուկը ուրախ դէպի տուն դարձաւ,
Պառաւի առջև մէկ նոր տաշտ տեսաւ,
Պառաւը ուրախ լինելու փոխան,
Նոր նոր անէծքներ թափում էր վրան.
«Ծերո՛ւկ դու անմիտ, ծերո՛ւկ խելագար,
«Մեծ բաղդ ես կարծում որ տաշտ ըստացար:
«Տաշտը շատ չնչին վարձ է, ո՞վ անմիտ,
«Շո՛ւտ գընա ձկնին ու խնդրէ՛ խըրճիթ»:
Դէպի կապուտ ծով ծերունին դարձաւ,
Ծովի կապուտակ գոյնը մըթացաւ,
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձկնին,
Եկաւ ձկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական,
Ծերունին այսպէս տուեց պատասխան.

«Իմ պառաւ կինը սաստիկ է կատղել,
«Էլ նա հիւղի մէջ չէ՛ ուզում ապրել,
«Ասում է՝ խրճիթ պէտք է ինձ համար,
«Ու խեղճ ծերուկիս չի տալիս դադար»:
Չըկնիկը ծերին տուեց պատասխան,
«Մի՛ հոգալ—տրտմիլ, ծերուկ պատուական:
»Միամիտ սրտով դէպի տուն գընա,
«Քու պառաւ կինը խըրճիթ կ'ունենայ»:
Ծերուկը դէպի իւր հիւղը դարձաւ
Առաջուայ հիւղի հետքն էլ չի գտաւ,
Իրա աչքերին նա չէր հաւատում—
Առջևը կեցած էր խըրճիթ սիրուն,
Կըտուրի վըրայ կար սպիտակ ծըխան.
Մաքուր սենեակի մէջ տեսաւ կնկան,
Որն որ փոխանակ Տիրոջ փառք տալու,
Սկըսաւ մարդուն յիշոցներ տալու.
«Ծերո՛ւկ դու անխելք, ծերո՛ւկ դու անմիտ,
«Մեծ բաղդ է, որ մենք ունեցանք խըրճիթ.
«Գնա՛ դէպի ծով ու ասա՛ ձըկան,
«Այս է հրամանը իմ խաթուն կընկան,

«Էլ դեղձուկ մընալ չուզեմ մէկ վայրկեան,
«Կուզեմ որ լինիմ ես ազնուական»:

Դ

Երբ դէպի ծով գնաց գըլխակոր,
Տեսաւ որ ծովը սաստիկ էր պըղտոր.
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկնին:
Եկաւ ձըկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերուկ պատուական»:
Ծերունին տըւեց նորան պատասխան.
«Պառաւս — քաւթառըս խիստ է բարկացած
«Որ մինչեւ օրըս դեղձուկ է մնացած,
«Բայց այդպէս մընալ չուզէ մէկ վայրկեան,
«Եւ կ'ուզէ լինել կին ազնըւական»:
Ձըկնիկը ծերին տըւեց պատասխան.
«Մի՛ տխրիլ — տրտմիլ, ծերուկ պատուական:
«Միամիտ սըրտով դէպի տուն գնա,
«Կինըդ այդ րոպէին էլ կարժանանայ»:
Ծերուկը իսկոյն դէպի տուն գնաց
Ու իր աչքերին նա չի հաւատաց.

Առջեւը տեսաւ փառահեղ տունը,
Պատըշգամբի վրայ կանգնած խաթունը՝
Սամուրէ բաճկոն ունէր նա հագին,
Գլխուն դիպակէ գըդակ թանգագին,
Վըզին մարգարտեայ մանեակ էր կախած,
Ոսկի մատանիք մատներին հագած,
Ոտերին կարմիր թանգ ոտնամաններ,
Առջեւը շարած հըլու ծառաներ,
Պառաւը նոցա մէջ ման էր գալիս,
Սաստով ու ծեծով հրաման էր տալիս։
Ծերուկը դող-դող ասաց իր կընկան.
«Բարե՛ւ քեզ, խաթուն իմ ազնըւական,
«Կարծեմ որ այժըմ երջանիկ ես դու»։
Կինն չուզաց անգամ վըրան նայելու։
Նորա ծառաներն շտապով վազեցին,
Աղբիւս մաքրելու ախոռ քըշեցին։

Ե

Կէս ամըսուայ չափ հազիւ թէ անցաւ,
Մեր պառաւ կինը նորից կատղեցաւ,
Նորից ծերուկին առջեւը կանչեց

Ու ձկնիկի մօտ երթալ հրամայեց.
«Դա՛րձ գընա, ասա՛ դու ոսկի ձըկան,
«Որ չուզեմ մընալ սոսկ ազնըւական,
«Կամ՝ սովորական մէկ իշխանուհի,
«Այլ կ'ուզեմ լինել ազատ թագուհի»։
Այս խօսքերը որ լըսեց ծերունին,
Ասաց վախեցած ու կողկողագին.
«Թըւացրե՞լ ես խելքըդ, անըզգա՛մ քաւթառ
«Թէ՞ ծիծաղեցնել ուզում ես աշխարհ,
«Դէմքըդ—շնորհքըդ մի՞թէ չես տեսնում։
«Որ թագաւորել էլ ես դու ուզում»։
Կատղեցաւ պառաւն, գոչեց սաստկագին
Ու ամուր ապտակ ծեփեց ծերուկին,
«Ի՞նչպէս ես կարող տալ լիրբ պատասխան,
«Գեղջո՛ւկ դու, իմ պէս մէկ ազնիւ կընկան,
«Դէ՛հ, շո՛ւտ արա, շուտ, գնա՛ դէպի ծով,
«Թէ կամաւ չերթաս՝ կը տանեն ծեծով»։
Տըխուր դէպի ծով ծերուկը գընաց,
Կապուտակ ծովի ջուրն էր սեւացած.
Սկըսաւ կանչել նա ոսկի ձըկին.

Եկաւ ձըկնիկը առաջ ծերուկին·
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական»։
Ծերուկը տըւեց նորան պատասխան·
«Խելքը թըռել է իսպառ իմ կընկան,
«Էլ չուզում մընալ նա ազնըւական,
«Խորհուրդ ու խըրատ էլ նա չի լըսում,
«Ազատ թագուհի լինել է ուզում»։
Ձըկնիկը ծերին տըւեց պատասխան·
«Մի՛ տըխրիլ—տըրտմիլ, ծերո՛ւկ պատուական։
«Այս անգամ էլ դու հանգիստ տուն գնա՛,
«Պառաւը թագ էլ գլխուն կ՚ունենայ»։

Զ.

Երբ որ ծերունին դէպի տուն դարձաւ,
Առջեւը հըրաշք, հիացք բացուեցաւ
Շըքեղ փըռուած էր ճոխ արքունիքը,—
Դահլիճի մէջ էր նորա կընիկը
Ճաշու սեղանի առջեւ նըստած,
Սեղանի վըրայ խորտիկներ շարած·
Չորս—կողմը դըրանիկ ու աւագորեար

Ծառայում էին նրան անդադար.
Ուտում էր ճուտով փլաւ ախորժակով
Ու գինի խմում էր նա մեծ բաժակով.
Դըրան մօտ կանգնած էին զինուորներ
Ձեռքերին բռնած սուր սուր կացիններ:
Ծերունին երբ որ պառաւին տեսաւ,
Իսկոյն վախիցը ոտներին ընկաւ.
«Բարև՛ քեզ, ասաց, դըշխոյ փառաւոր,
«Ահա՛ քեզ տեսայ խապառ բաղդաւոր...»
Պառաւը մարդու վըրան չի նայեց,
Միայն դահլիճից քըշել հրամայեց:
Նախարարները վըրայ—վազեցին,
Ծերուկին ծեծով արտաքս հանեցին,
Դռնապաններն էլ՝ ձեռքերին կացին,
Մազ—մընաց խեղճին որ չի մորթեցին.
Իսկ ժողովուրդը վերցուց աղաղակ,
Ծաղր ու ծանակով արաւ խայտառակ,
Օ՛խ, յիմա՛ր, ասաց, միշտ խելք սորվեցի՛ր:
Ու միւս անգամ պատիւըդ գիտցի՛ր:

Է.

Էլի կէս ամիս որ նորից անցաւ,
Պառաւը արդէն իսպառ կատղեցաւ.
Նախարարներէն հրամայեց մէկին,
Որ երթայ, գտնէ, բերէ ծերուկին։
Երբ եկաւ ծերը՝ կինն ասաց նորան.
«Ահա՛ լսէ՛ դու իմ խիստ հըրաման —
«Գը՛նա ու գըտիր դու ոսկի ձըկան
«Ասա՛ սիրտը չուզէ, ասա՛, իմ կընկան
«Երկրի վրայ լինել մէկ սոսկ թագուհի,
«Այլ կ'ուզէ լինել ծովի տիրուհի,
«Ովկիանոս — ծովի մէջ կ'ուզէ կենալ,
«Ոսկի ձուկն էլ ծառայ ունենալ»։
Չհամարձակեցաւ խեղճուկ ծերունին
Հակառակ մէկ խօսք ասել պառաւին,
Գըլուխը կախած գընաց դէպի ծով.
Տեսաւ որ ծովը սաստիկ էր խռով.
Գոռում, գոչում էր ահեղ փոթորիկ,
Տատանում էին փրփրած ալիք.

Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին․
Եկաւ ձըկնիկը, ասաց ծերուկին․
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական։
Ծերունին նորան տուեց պատասխան,
«Ա՜խ, երբ պիտ լինի վերջը իմ ցաւին․
«Էլ սիրտը չուզէ քիմար պառաւին
«Երկրի վրայ լինիլ մէկ սոսկ թագուհի,
«Այլ կուզէ լինիլ ծովի տիրուհի,
«Ովկիանոս—ծովի մէջ կուզէ կենալ,
«Քեզ էլ իւր ծառայ դեսպան ունենալ»։
Ձըկնիկը ոչինչ չը պատասխանեց,
Պոչը կամացուկ նա ջըրին խփեց,
Լուռ ու մունջ ջըրի մէջը սուզեցաւ
Ու ծովի խորքը գընաց թաք կեցաւ։
Երկար ըսպասեց նորան ծերուկը․
Երևան չեկաւ էլ ոսկի ձուկը․
Իրիկնադէմին տուն վերադարձաւ
Ու առջևն այսպէս պատկեր բացուեցաւ․
Նորա պառաւը շէմքին էր նըստած
Ու կոտրած տաշտը կար նորա դիմաց։